

5.

Հեղինակ՝ Աթուևուս (Նիկիտական—Աթուևուսուս) :

Նախընթացներէն յայտնի է որ մեր հանգանակն ինք իրեն մէջ կը պարունակէ մերձաւորապէս իր ժամանակագրութիւնը . հիմայ կրնանք փնտռել թէ ո՞վ է անոր հեղինակը :

Յոյն բնագիրը՝ որն որ գրեթէ 20 տարի առաջ (1850) ի լոյս բնծայուեցաւ, Ս. Աթանասի գործոց մէջ Լոնտոնի տպագրութեամբ՝ երկու գրչագիրներէ այս ինքն Վատիկանեան թիւ 1431 մատենէն եւ Reg. 2502 Փարիզեան մատենէն՝ որն որ 1562ին գրուած է, եւ ետքը նոյն բնագիրը նորէն հրատարակեց Ապէ Միներ գաղղիացի քահանան բոլոր Յունական Հարց գործոցը տպագրութեան առնէ՝ «Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրացւոց մեկնութիւն ի հանգանակն», (Ἀθανασίου Ἀρχιεπισκόπου Ἀλεξανδρίας Ἐρρηγνεία εἰς τὸ Σύμβολον) խորագիրը կը կրէ :

Աս հմուտ եւ արդիւնաւոր՝ արբոց Հարց գործքերուն հրատարակիչը կը ջանայ սոյն վերնագրին հաւատարմութիւնը պաշտպանել սա հետեւեալ ցոյցերով : 1. Վասն զի համեմատ է ան հաւատոյ դաւանութեան՝ զորն որ Աթանաս Յովինիանոս կայսեր գրած է : 2. Ապէ Միներ Աթանասի գործոց դ. հատորին մէջ (սիւն 1638) ուրիշ դաւանութիւն մը կը ցուցնէ՝ Աթանասի աւուամբ, նոյնը համեմատ դասերով մեր առաջիկայ հանգանակին : 3. Վասն զի սա մեր հանգանակին մէջ մերժուած մոլորութիւնները մինակ Աթանասի ժամանակին կը վերաբերին : 4. Վասն զի ὑπόστασις բառը հռոթեան նշանակութեամբ գործածուած կ'ստիպէ զմեզ որ նոյնը Աթանասի բնծայեմք . որովհետեւ վերջին նորովքին մէջ կը դատապարտուին անոնք՝ որոնք Որդւոց կամ Հոգւոյն արբոց համար կ'ըսեն թէ Հօրմէ ուրիշ ὑπόστασις ունին . սա առումը, կ'ըսէ վերոյիշեալ հրատարակիչը, Աթանասի ժամանակէն ետքը չի գործածուիր : 5. Վասն զի սա դաւանութիւնը սա մեծ սուրբ Հօր անարժան չէ : 6. Արկու գրչագրաց մէջ ալ (զորոնք նորէն բաղդատած է Ապէ Միներ) իրեն կ'ընծայուի :

Առաջին, երկրորդ եւ չորրորդ պատճառները մեզն այնչափ հաստատուն չեն երեւար : Այ առ Յովինիանոսի ուղղուած դաւանութեան մէջ եւ ոչ վերոյիշեալ դ. հատորին վերջերք գրուած հանգանակին մէջ կը գտնուի բան մը ան առութիւններէն կամ բառերէն որոնք յատուկ են մեր հանգանակին : Այ ոչ ալ ὑπόστασις բառին ὁὐσία բառին նշանակութեամբ գործածուելէն բան մը կրնայ յառաջ բերուիլ . վասն զի ան եզրները նորովքին հետ

¹ Հատ. Ա. մասն. Բ. էջ 1274 :

² Հատ. Բ. Գրծ. Աթան. սիւն 1230 :